

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 25/5

ք.Երևան

8 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ «ՓԻ-ԷՆ-ԱՐ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

«ՓԻ-ԷՆ-ԱՐ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ ընկերություն) 2018թ. փետրվարի 23-ին գրանցվել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում: Տեղյակ չլինելով, որ ընկերության գրանցումը հարկային մարմնում տեղի է ունենում ավտոմատ կարգով, ապրիլի 6-ին ընկերության տնօրենն այցելել է Էրեբունու հարկային տեսչություն՝ ընկերությունը գրանցելու նպատակով: Սակայն այնտեղ իրեն տեղեկացրել են, որ ընկերության գրանցումն արդեն իսկ կատարվել է ավտոմատ կարգով՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվելու պահից:

Քանի որ սահմանված ժամկետում չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, ուստի ընկերությունը համարվել է ԱԱՀ վճարող: Սակայն, քանի որ ընկերությունը դեռ չի սկսել գործունեությունը և չունի համապատասխան միջոցներ ԱԱՀ-ի դաշտում աշխատելու համար, ընկերությունը խնդրում է թույլ տալ գործունեությունը ծավալել շրջանառության հարկի դաշտում:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«ՓԻ-ԷՆ-ԱՐ» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 13.02.2018թ.:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, որի հետևանքով ընկերությունը համարվել է ԱԱՀ վճարող:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նույնպիսիները (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված

դեպքերի) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում ընկերության կողմից սահմանված կարգով և ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, հետևապես 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող չի կարող համարվել:

Միննույն ժամանակ ներկայացված դիմում-բողոքում չի ներկայացվել հիմնավոր փաստարկ (ապացույց)՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների վերաբերյալ:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ՓԻ-ԷՆ-ԱՐ» ՍՊԸ դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



[Handwritten signature in blue ink]

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ